ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.04.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4791-2020 գրությամբ «Սմարթէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1039-2020 գրության հիման վրա 31.03.2020թ. թիվ 26/26-1/4791-2020 գրությամբ նախաձեռնել է «Սմարթէլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սմարթէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սմարթէլ» ՍՊԸ-ն 10.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

Պատվիրատուն 04/03/2020թ.-ին Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով հրապարակել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հրավերով 6-11-րդ չափաբաժինների մասով սահմանվել են գնման առարկա հանդիսացող ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/հ	Գնման ենթակա ապրանքներ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՕՍՏ-ի	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
6	Բանալի մանեկային 8x10	7811-0003	ԳՕՍՏ 2839-80
7	Բանալի մանեկային 12x13	7811-0007	ԳՕՍՏ 2839-80
8	Բանալի մանեկային 14x17	7811-0022	ԳՕՍՏ 2839-80
9	Բանալի մանեկային 17x19	7811-0023	ԳՕՍՏ 2839-80
10	Բանալի մանեկային 19x22	7811-0024	ԳՕՍՏ 2839-80
11	Բանալի մանեկային 22x24	7811-0025	ԳՕՍՏ 2839-80

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, այդ թվում հրավերով սահմանված կնքվելիք պայմանագրի նախագիծը և հրավերի փաթեթում ներառված մյուս փաստաթղթերը՝ Ընկերությունը 6-11-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է մասնակցելու հայտ, որում ներառվել է հավելված 1.1-ը, որով ներկայացվել են իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական հետևյալ նկարագրերը, որտեղ լրացված են ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը արտացոլող սյունակները.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի					
	անվանումը	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
6	Բանալի մանեկային 8x10	Բանալի մանեկային 8x10	Բանալի մանեկային 8x10	Բանալի մանեկային 8x10	Новосибирский инструментальный завод	7811-0003 ԳՕՍՏ 2839-80
7	Բանալի մանեկային 12x13	Բանալի մանեկային 12x13	Բանալի մանեկային 12x13	Բանալի մանեկային 12x13	Новосибирский инструментальный завод	7811-000 ԳՕՍՏ 2839-80
8	Բանալի մանեկային 14x17	Բանալի մանեկային 14x17	Բանալի մանեկային 14x17	Բանալի մանեկային 14x17	Новосибирский инструментальный завод	7811-0022 ԳՕՍՏ 2839-80
9	Բանալի մանեկային 17x19	Բանալի մանեկային 17x19	Բանալի մանեկային 17x19	Բանալի մանեկային 17x19	Новосибирский инструментальный завод	7811-0023 ԳՕՍՏ 2839-80
10	Բանալի մանեկային 19x22	Բանալի մանեկային 19x22	Բանալի մանեկային 19x22	Բանալի մանեկային 19x22	Новосибирский инструментальный завод	7811-0024 ԳՕՍՏ 2839-80
11	Բանալի մանեկային 22x24	Բանալի մանեկային 22x24	Բանալի մանեկային 22x24	Բանալի մանեկային 22x24	Новосибирский инструментальный завод	7811-0025 ԳՕՍՏ 2839-80

Պատվիրատուն գրավոր հիմքերում, որպես Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, վկայակոչել է այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած հավելված

1.1-ում (ապրանքի ամբողջական նկարագիր) բոլոր չափաբաժիններում ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը չեն եղել նշված. այդ պատճառով Պատվիրատուն պահանջել է հավելված 1.1-ի շտկումը, սակայն Ընկերությունը շտկում կատարելու համար Պատվիրատուին որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Սակայն, ըստ Ընկերության, ներկայացված հավելված 1.1-ում (ապրանքի ամբողջական նկարագիր) ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը սյունակները բոլոր չափաբաժինների մասով լրացվել են, հետևաբար չի համապատասխանում իրականությանը Պատվիրատուի այն պնդումը, որ «Սմարթէլ» ՍՊԸ-ն բոլոր չափաբաժինների մասով չի լրացրել հավելված 1.1-ի՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը սյունակները:

Ընկերությունը նշել է, որ վերոգրյալով պայմանավորված Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը առարկայազուրկ են, և «Սմարթէլ» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում թույլ չի տվել, այդ իսկ պատճառով Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի ներկայացրած հիմքերը չեն կարող հիմք ծառայել «Սմարթէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«Սմարթէլ» ՍՊԸ-ն հավելված 1.1-ի՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը սյունակներում Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների անվանումները նշած լինելու մասով հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում ձեռքբերման ենթակա և Ընկերության կողմից առաջարկվող ապրանքները մետաղական գործիքներ են, այդ գործիքների վրա դաջված են դրանց համարները և այլ նշումներ առկա չեն: Այդ պատճառով է, որ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը սյունակներում նշվել են առաջարկվող ապրանքների անվանումները «Բանալի մանեկային» և չափսերը, որոնք ցույց են տալիս այդ ապրանքների տեսակը և թույլ են տալիս այդ ապրանքները տարբերել այլ ապրանքներից:

Ընկերությունը հայտնել է նաև, որ վերջինիս առաջարկած ապրանքների տեխնիկական բնութագրերը լիովին համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին, այսինքն՝ «Սմարթէլ» ՍՊԸ-ի առաջարկած ապրանքները այն ապրանքներն են, որոնք անհրաժեշտ են Պատվիրատուի պահանջմունքները բավարարելու համար, հետևաբար գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել: Նման պայմաններում գտնում է, որ անհասկանալի է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի շրջանակներում վերջինիս գործողությունները չեն կարող պատճառ հանդիսանալ մասնակցին պատասխանատվության ենթարկելու՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, որը կսահմանափակի «Սմարթէլ» ՍՊԸ-ի տնտեսական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է, ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Սմարթէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2020/69 ծածկագրով ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/69 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1039-2020 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման ընթացքում պարզվել է, որ «Սմարթէլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում՝ հավելված 1.1-ում (ապրանքի ամբողջական նկարագիր), բոլոր չափաբաժիններում ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը նշված չեն, քանի որ Ընթացակարգի հրավերով նախատեսված է եղել վերոնշված տվյալների ներկայացումը, ուստի մասնակցից պահանջվել է շտկում, սակայն սահմանված ժամկետում մասնակիցը ընդհանրապես չի ներկայացրել որևէ փաստաթուղթ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը գնահատող հանձնաժողովը մերժել է «Սմարթէլ» ՍՊԸ-ի հայտն ամբողջությամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/69 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար գործիքների հավաքածուների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմարթէլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2020թ. թիվ 26/26-1/4791-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1039-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Սմարթէլ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ. ներկայացված գրավոր դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված

են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է՝ ներառյալ, եթե մասնակիցը նույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար գործիքների հավաքածուների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմարթէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1-ը (ապրանքի ամբողջական նկարագիր), որտեղ բոլոր չափաբաժիններում ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը նշված են գնման առարկաների անվանումներով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերն ընդհանրապես չեն ներկայացվել:

23.03.2020թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է «Սմարթէլ» ՍՊ ընկերության հայտն ամբողջությամբ:

Այսպիսով՝ «Սմարթէլ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելվածի 1.1-ում բոլոր չափաբաժինների մասով ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը նշված են գնման առարկաների անվանումներով, այն է՝ 6-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 8×10», 7-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 12×13», 8-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 14×17», 9-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 17×19», 10-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 19×22», 11-րդ չափաբաժին՝ «Բանալի մանեկային 22×24», 20-րդ չափաբաժին՝ «Հատուկ բանալի՝ թիակ (ломик)», 24-րդ չափաբաժին՝ «Մոմերի բանալի 21», ինչի շտկման անհրաժեշտության վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է, սակայն չի շտկել:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով մյուս մասնակիցների կողմից ներկայացված և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված հայտերի թիվ 1.1 հավելվածները, արձանագրում եմ, որ քննարկվող չափաբաժիններում որպես ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ նշված է «КЗСМИ» բառը, այն է՝ «Камышинский завод слесарно-монтажного инструмента», այսինքն՝ արտադրողի անվանումը: Գնահատելով վերոնշված համեմատությունները՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 4 արձանագրությամբ արձանագրված որպես «Սմարթէլ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունն ըստ էության նույնն է, ինչ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման և մակնիշի փոխարեն գրված լինի արտադրողի անվանումը, հետևաբար Ընկերության հայտի թիվ 1.1 հավելվածը նման կերպ լրացված լինելու պայմաններում, միայն տվյալ հիմնավորմամբ առանձնացնելով և անբավարար գնահատելով, խախտվել է ոչ խտրական հիմունքներով

գնման գործընթացի կազմակերպման սկզբունքը, առավել ևս գտնում եմ, որ քննարկվող գնման առարկաների մասով ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ պարամետրերը կարող են կիրառելի չլինել: Ուստի, գտնում եմ, որ «Սմարթէլ» ՍՊԸ-ի կողմից նման ձևով թիվ 1.1 հավելվածը ներկայացնելը չի կարող բավարար հիմք համարվել Ընկերության վարքագիծը գնահատելու, վերջինիս կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիման վրա գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2019թ. թիվ 26/26-1/4791-2019 գրությամբ «Սմարթէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ